հյուսվածք՝ պատմագիրքն այդ պատճառով շատ է տուժել: «Ըստ երևույթին,– այս կապակցությամբ նկատում է Լորետա Դանեղյանը,– հեղինակի համար չափազանց դժվար է եղել տարբեր տարիներին ու զանազան վայրերում ժողոված փաստերն ի մի բերել ու խմբավորել և այդ պատճառով նա չի կարողացել խուսափել նյութի ցրվածությունից և որոշ կրկնություններից»[3]:

Այսուհանդերձ, նույնիսկ այս պարագային, ըստ արժանվույն պետք է գնահատել պատմագրի՝ կենտրոնացված պատում ստեղծելու ջանքը: Նույնիսկ վերջին ցաքուցրիվ գլուխներում դա զգալի է:

Աշխատության այս գլխում քննաբանվել են «Գիրք պատմութեանց»-ի ընդհանուր կառուցվածքին ու բովանդակային ընդգրկումներին վերաբերող խնդիրներ, հատուկ ուշադրություն է դարձվել ներտեքստային կառուցվածքային միավորների բնույթին: Մեկնելով միջնադարյան տեքստերին բնորոշ յուրահատկություններից՝ իբրև կառուցվածքային օրինաչափություններ ու կառույց պայմանավորող գործոններ են նկատվել և առանձնահատուկ քննության են ենթարկվել նաև երկխոսություններն ու մենախոսությունները, ժամանակային ընդգրկումների ձևերը, ինչպես նաև՝ աստվածաշնչյան ինտերտեքստը:

Խնդրադրությունները վերլուծվել են սոսկ տիպական օրինակների մակարդակով՝ ընդհանուր օրինաչափությունների ցուցանման սկզբունքով:

---

[3] ***Լորետա Դանեղյան,*** Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, էջ 17: